



# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Օրիուս կենտրոնների 2014թ.

Հունվար – Մարտ ամիսների

Կատարած աշխատանքների մասին


2014 թվականին ՀՀ Օրհուս կենտրոնները շարունակել են իրենց առաքելությունը՝ ուղղորդվելով Օրհուսի կոնվենցիայով (տեղեկատվության մատչելիություն, հասարակության ներգրավվածություն որոշումներ կայացնելու գործընթացում և արդարադատության մատչելիություն): Հավատարիմ մնալով իրենց առաքելությանը հարթակ են հանդիսացել քննարկումների քաղաքացիական նախաձեռնությունների, հանդիպումների ու էկոլոգիական մշակույթի ձևավորման համար, կապող կամուրջ են հանդիսացել հասարակություն-SIU ասպարեզում, հենվելով Օրհուսի կոնվենցիայի երեք հիմնադրույթների վրա՝ նպաստել շրջակա միջավայրի պահպանությանն ու համայնքների կայուն զարգացմանը:

Հայաստանի Օրհուս կենտրոններն այս տարի իրենց պաշտոնական գործունեությունն սկսել են մարտի 1-ից, սակայն աշխատանքը և ոչ մի րոպե կանգ չի առել՝ սկսած հունվարի 10-ից:


Օրհուս կենտրոնների աշխատանքը ընթացել է ըստ համակարգողների «Ծառայությունների մատուցման պայմանագրի» հավելված 2-ում հաստատված տեխնիկական առաջադրանքի, որն էլ իր հերթին կազմվել է Օրհուս կենտրոնների ճանապարհային քարտեզի հիման վրա և համաձայնեցվել է «Բլեջան» ՀԿ և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի միջև ստորագրված պայմանագրով:

✓ Ընդհանուր առմամբ հաշվետու ժամանակահատվածում Օրհուս կենտրոնները միայնակ կամ այլ կազմակերպությունների հետ համագործակցությամբ իրականացրել են 114 միջոցառում, այդ թվում տեղեկատվության մատչելիության ուղղությամբ 51 միջոցառում, հասարակության մասնակցության ուղղությամբ 21, արդարադատության մատչելիության ուղղությամբ 1 ու էկոլոգիայի ուղղված 21 միջոցառում, նախաձեռնել են 15 հասարակական քննարկում, մասնակցել 3 հասարակական լսման, որոնց մասնակցեցին 1272 մարդ, որից 756 տղամարդ և 516 կին, քննարկվող հարցերի կամ նախագծերի մասին տարածել հնարավոր ձեռքբերված տեղեկատվությունը: Ընդհանուր առմամբ տարածք է տրամադրվել 21 անգամ տարբեր քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների: [/Կից ֆայլով կարող եք տեսնել Օրհուս կենտրոնների վիճակագրական հաշվետվությունն ավելի մանրամասն/](#)

✓ Բոլոր Օրհուս կենտրոնների համակարգողների, փորձագետների և էկոդաշինքի անդամների հետ համատեղ կազմակերպվել և անցկացվել է իրազեկման սեմինար-քննարկում շրջակա միջավայրի խնդիրների և ոլորտին առնչվող կարևոր որոշումների կայացման ընթացակարգերի վերաբերյալ, մասնավորապես. ՇՄԱԳՓ օրենքի նախագծի, հանքարդյունաբերության ոլորտի կարգավորման վերաբերյալ՝ [http://aarhus.am/?page\\_id=3257](http://aarhus.am/?page_id=3257) :



- ✓ ՏԻՄ և մարզային կառավարման մարմինների պաշտոնատար անձանց համար՝ Օրհուսի կոնվենցիայով և ազգային օրենսդրությամբ ունեցած պարտավորությունների վերաբերյալ, կենտրոնները համատեղ պատրաստում են տեղեկատվական թերթիկ, որը հետագայում կտրամադրվի համապատասխան մարմիններին,
- ✓ Բոլոր Օրհուս կենտրոնների հետ համատեղ մամուլի ասուլիս չի կազմակերպվել, սակայն կենտրոնները միաժամանակյա համաձայնեցված աշխատանք են տարել Սևանից հավելյալ ջրբացթողումների մասին օրենսդրական նախաձեռնության շուրջ և տեղերում առանձին ինտերվյուներ տվել խնդրի վերաբերյալ, մասնակցել հեռուստահաղորդումների՝



մասնավորապես հղում անելով Օրհուսի կոնվենցիային և որոշման կայացման գործընթացում ՏԻՄ-երի, հատկապես ազդակիր համայնքների իրազեկման ու մասնակցության կարևորությանը: Սևանի վերաբերյալ տեղակատվության տրամադրման և հաղորդումների հղումներն ստորև.

<http://www.armeniatv.am/hy/programs/39041/45826#.UuKtb4fqIXY.facebook>,

<http://www.youtube.com/watch?v=WDsCjkmxVCc>

<http://ecolur.org/hy/news/sevan/join-quotsave-sevanquot-marching/6080/> :

- ✓ Կենտրոններն աշխատանք են տարել Հայաստանում և մասնավորապես մարզում առկա բնապահպանական արդյունավետ կառավարման լավագույն փորձի տարածման, կառավարման մարմինների և հասարակության փոխհամագործակցության լավագույն օրինակների ներկայացման ուղղությամբ, առաջարկել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև համագործակցության արդյունավետ միջոցներ և մեխանիզմներ՝ ակտիվ համագործակցելով Էկոդաշինքի, “Էկոլուր” ՀԿ-ի, Համահայկական Բնապահպանական ճակատի, Կանայք և այլ քաղաքացիական նախաձեռնությունների հետ):



- ✓ ՕԿ-ները նախաձեռնել կամ աջակցել են էկոկրթական 21 միջոցառման կազմակերպմանը՝ ՀԿ-ների ներկայացուցիչների, ուսանողների, երիտասարդների, ուսուցիչների ներգրավմամբ, մարզում առկա շրջակա միջավայրի հիմնախնդիրների, ինչպես նաև Օրիուսի Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների իրականացման վերաբերյալ:



- ✓ Տեղեկատվական տարբեր միջոցներով և եղանակներով՝ կայք-էջեր, տեղեկագրեր, տեղեկատվական ստենդներ, հոդվածներ և այլն, աջակցել առկա բնապահպանական տեղեկատվության տարածմանը և հանրության լայն շրջանների իրազեկության մակարդակի բարձրացմանը՝ նպաստելով բնապահպանական տեղեկատվության հասանելիությանն ու մատչելիությանը (օգտագործելով [www.aarhus.am](http://www.aarhus.am) կայքի, տեղական էլեկտրոնային ցանցերի և տարբեր ՁԼՄ-ների ընձեռած հնարավորությունները):
- ✓ Սևանի խնդրի հանրայնացման և հատկապես այն Յունեսկոյի բնական ժառանգության ցանկում ընդգրկելու մասին ՕԿ-ները հաղորդագրություն են տարածել, Գավառի Օրիուս կենտրոնը համակարգել է Գեղարքունիքի մարզի ՀԿ-ների աշխատանքն այս ուղղությամբ՝ <http://armtimes.com/hy/read/50087>, <http://armtimes.com/hy/read/49854>:
- ✓ Կանաչապատման հարցերին, ապօրինի ծառահատումներին ու տեղական մակարդակում խնդրի լուծման տարբերակներին բազմիցս անդրադարձել է Գյումրու ՕԿ-ն, տեղեկատվություն տրամադրել ՁԼՄ-ներին՝ <http://tsayg.am/mainpage/7601-insls-eu-sl-usl.html>, <http://www.youtube.com/watch?v=EssSYwaobbE> <http://hetq.am/arm/news/54019/gyumrium-tsareri-ety-katarvum-e-komunal-bazhni-peteri-tchashakov.html#.U00A2R-o8uQ.facebook>
- ✓ ՕԿ ներկայացուցիչները մասնակցել են տարաբնույթ հեռուստահաղորդումների՝ ներկայացնելով թե՛ ՕԿ աշխատանքը, թե՛ ոլորտի տարաբնույթ տեղեկություններ:
- ✓ [www.mnp.am](http://www.mnp.am) կայքում ստեղծված ՀՀ մարզեր և համայնքներ բաժնում թարմացումներ կատարելու և բնապահպանական ինֆորմացիայի պահեստարանների տեղեկատվական բազաները համալրելու նպատակով անհրաժեշտ տեղեկատվությունը հավաքագրման ընթացքի մեջ է:
- ✓ հասարակության մասնակցության խթանման նպատակով նախաձեռնվել է 15 հասարակական քննարկում կամ ՕԿ-ները հարթակ են ծառայել բնապահպանական թեմաներով խորհրդակցությունների, բանակցությունների և դասընթացների կազմակերպման և անցկացման համար:

- ✓ [www.mnp.am](http://www.mnp.am) կայքում դրվող հայտարարությունների հղումները տեղադրվել են նաև [www.aarhus.am](http://www.aarhus.am) կայքում, տարածվել էլ. ցանցերով՝ իրազեկելով հանրությանը և հնարավորություն ստեղծելով մասնակցելու տեղերում կազմակերպվող հասարակական լսումներին, օրինակ Դիլիջանի կեղտաջրերի մաքրման կայանի հասարակական լսումները անց են կացվել հենց ՕԿ-ում,



մյուս դեպքերում ՕԿ-ները աջակցել են դրանց կազմակերպմանը:

- ✓ ՕԿ-ները խթանել են ազդակիր համայնքների բնակչության մասնակցությունը հանրային լսումներին: Այս ուղղությամբ հատկապես ակտիվ աշխատանք է տարել Ապարանի Օրհուս կենտրոնը, հասարակական լսումների ընթացքըն ամբողջությամբ տեսագրվել ու տարածվել է՝ առավել լայն հանրությանն իրազեկելու նպատակով:



Էկոդաշինքի անդամ ՀԿ-ների ու փորձագետների հետ միասին հասարակայնության համար անցկացնել է խորհրդատվական հանդիպումներ, իրազեկել Մելիքցյուղի բնակչությանը հանրային լսումների կազմակերպման ու անցկացման մասին, դրանց ընթացքում հնչած որոշումների հետագա ընթացքի մասին: -

- ✓ ՕԿ-ների ներկայացուցիչները՝ PR պատասխանատուն և Ստեփանավանի Օրհուս կենտրոնի համակարգողը, մասնակցել են Կլիմայի ազգային հարթակի աշխատանքային հանդիպումներին ու իրենց առաջարկները ներկայացրել Հայաստանում Կլիմայի փոփոխության ու հարմարվողականության հարցերի մասին հանրության պատշաճ իրազեկման վերաբերյալ: -
- ✓ ՕԿ-ները դիմել են բնապահպանական տեղեկատվություն տնօրինող աղբյուրներին և հանրության համար կարևոր բնապահպանական հարցերի շուրջ ստացած տեղեկատվությունը տարածել այդ տեղեկատվությունն ինչպես կայքի, այնպես էլ էլ. ցանցերի միջոցով. [http://aarhus.am/?page\\_id=132](http://aarhus.am/?page_id=132):


- ✓ Գավառի ՕԿ-ն ՀՀ նախագահին առընթեր Սևանա լճի հարցերով հանձնաժողովին առաջարկություններ է ներկայացրել Սևանում ցանցային տնտեսությամբ ձկնաբուծության նախագծի ներկայացրած վտանգերը կանխելու և Սևանի կենսաբազմազանության պահպանության այլընտրանքային մոտեցումների վերաբերյալ:
- ✓ Շրջակա միջազգավայրի բաղադրիչների վիճակի վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրելու նպատակով՝ հունվար-մարտ ամիսներին ՕԿ-ների կողմից 20 հարցում է ուղղվել իրավասու մարմիններին, ստացված տեղեկատվությունը տարածվել է, անհրաժեշտության դեպքում առկա տեղեկատվության հիման վրա կազմակերպել հանրային քննարկում:

✓

Ընդհանուր՝

	Օրհուս կենտրոն	Նամակների քանակը
1.	Երևան	1
2.	Ալավերդի	-
3.	Ապարան	3
4.	Արարատ	0
5.	Գավառ	3
6.	Գյումրի	-
7.	Գորիս	3
8.	Դիլիջան	2
9.	Եղեգնաձոր	2
10.	Եղվարդ	-
11.	Իջևան	1
12.	Կապան	3
13.	Հրազդան	1
14.	Ստեփանավան	1
15.	Վանաձոր	0

- ✓ Օկ-ների գործունեությունն անընդհատ եղել է միջազգային կառույցների ուշադրության կենտրոնում.
  - Կենտրոնների դրական փորձին տեղում ծանոթանալու նպատակով հունվարի 28-ին Հրազդանի Օրհուս կենտրոն է այցելել Շվեյցարիայի արտաքին գործերի դեպարտամենտի քարտուղար Իվ. Ռոսիեի գլխավորած պատվիրակությունը:
  - Մարտի 28-ին ճանաչողական այցով Հրազդանի և Դիլիջանի Օրհուս կենտրոններ են ժամանել ԵԱՀԿ-ում, ՄԱԿ-ում և միջազգային կազմակերպություններում Շվեյցարիայի ներկայացուցչության Գլխավոր քաղաքական խորհրդական Ա. Իֆկովից Հորները, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի Տնտեսական և բնապահպանական ծրագրի պատասխանատու Տ. Դեմբակու ուղեկցությամբ:



✓ ՕԿ-ները մասնակցել են միջազգային հանդիպումների.

- Եղեգնաձորի ՕԿ համակարգողը՝ որպես ԵԱՀԿ երիտասարդ դեսպան հունվարի 14-18-ը մասնակցել է Վիեննայում կայացած ԵԱՀԿ մոդելի առաջին հանդիպմանը, որի մասին տեղեկություններ է ներկայացրել իր գործընկերների՝ ու ակտիվ գործունեություն սկսել մասնավորապես երիտասարդության հետ: Աջակցել է ՕԿ-ների մտահոգությունները բովանդակող նամակի պատրաստմանն՝ ուղղված ուղղված Շվեյցարիայի Համադաշնության նախագահ, արտգործնախարար և ԵԱՀԿ գործող նախագահ Դ. Բուրկհալտերին:



- Գավառի ՕԿ համակարգողը հաջող մասնակցություն և ելույթ է ունեցել ԵԱՀԿ Տնտեսական և բնապահպանական 22 -րդ համաժողովում՝ հունվարի 27-ին Վիեննայում:



- ՕԿ-ների ներկայացուցիչները մասնակցել են, իսկ Գավառի համակարգողը ՕԿ-ների աշխատանքի ու փորձի վրա հիմնված բովանդակալից շնորհանդես է

ներկայացրել <<Բնության պահպանության խնդիրները Հայաստանում վերականգնվող էներգետիկայի զարգացման համատեքստում>> թեմայով:



- ✓ Բոլոր Օրհուս կենտրոնները եռամսյակային հաշվետվություն են ներկայացրել ծրագրի ղեկավարին: Կենտրոնի փորձագետների խորհրդի նիստ են հրավիրել Կապանի, Հրազդանի, Դիլիջանի ՕԿ-ները, մյուս կենտրոնները գործունեության վերաբերյալ փորձագետների խորհրդին հաշվետվություններ են ներկայացրել էլեկտրոնային նամակագրությամբ:
- ✓ Օրհուս կենտրոնի կողմից ընթացիկ միջոցառումների վերաբերյալ համառոտ հաշվետվություն և նյութեր են ներկայացվել (միջոցառման արձանագրությունը, լուսանկար, գրանցման թերթիկ, տեսանյութ, օրակարգ, հայտարարություն, շնորհանդես և այլն) ծրագրի ղեկավարին և PR մենեջերին՝ ըստ սահմանված կարգի:
- ✓ Տասնամյա աշխատանքի արդյունքում Օրհուս կենտրոնները կատարելագործել են իրենց հմտությունները, այժմ նրանք հանդիսանում են տեղեկատվության սկզբնաղբյուր՝ արտադրելով որակյալ, հավաստի և հիմնավորված էկոլոգիական տեղեկատվություն: Օրհուս կենտրոնների կայքում՝ [www.aarhus.am](http://www.aarhus.am) «Փորձագետի անկյուն» բաժնում, պարբերաբար ներկայացվում են մասնագետների կողմից էկոլոգիական թեժ հիմնահարցերի շուրջ կատարված անաչառ վերլուծություններ և մասնագիտական կարծիքներ, որոնց պահանջարկի և սպառման վառ ապացույց է հանդիսանում ներկայացված տեղեկատվության հանդեպ տարբեր լրատվամիջոցների հետաքրքրվածությունը, ինչպես նաև կայքից օգտվողների թիվը 7800 այցելու և 20 000 դիտված էջ: Կայքի այս բաժինը հարթակ է հանդիսանում նաև Օրհուս կենտրոնների հետ համագործակցող ՀԿ-ների կողմից տեղեկատվություն տիրապետող մարմիններին կատարված հարցումները և դրանց պատասխանները լուսաբանելու և հասարակությանը մատչելի դարձնելի գործում:

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՆԿՑՈՒՆ



Արդյո՞ք Հայաստանն ունի Օրհուսի կոնվենցիայի Ազգային համկարգող

29-05-2014

Կոնվենցիայի ազգային համկարգող ու ֆոնդ վարկյալ միանգամայն տարբեր բաներ են

26-05-2014

«Օրհուսի մասնակալը խախտում, թե՛ շինուցություն»

26-05-2014

Բնյու՛ւ են վերբացվել Հանրական և Ջերմուկի ջրաբանական արգելավայրերի գրառեցրած...

Բոլոր նյութերը » » »



- ✓ Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց, հզորացվել է նաև էկոլոգիական տեղեկատվությունը լայն հասարակությանը մատուցման միջոցները՝ Օրհուս կենտրոնների կայքի «Փորձագետի խոսքը» բաժնում ժամանակակից մուլտիմեդիա գործիքների օգտագործմամբ ներկայացվում են հարցազրույցներ (տեսանյութեր) բնապահանության ոլորտի մասնագետների հետ, որի շնորհիվ կայքի այցելուներն իրենց հետաքրքրող հարցերի հստակ ու հիմնավոր պատասխանները կարող եք ստանալ անմիջապես գիտականների շուրթերից:



- ✓ Այս տարվա ծրագրով կենտրոնների հետ աշխատել են 2 փորձագետ՝ Գևորգ Դանիելյան և Նաիրա Մանդալյան /իրենց հաշվետվությունները կցված են/
- ✓ Մնացած կատարած աշխատանքների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը կարող եք տեսնել Օրհուս կենտրոնների վիճակագրական հաշվետվության մեջ, որտեղ գրանցված է ամենօրյա կատարած աշխատանքները /կից 15 կենտրոնների վիճակագրական հաշվետվությունները և 1 ընդհանրացված հաշվետվությունը Exsel ֆայլերով/

Լիաննա Ասոյան  
ՀՀ Օրհուս կենտրոնների ծրագրի ղեկավար  
Մարի Չաքրյան  
ՀՀ Օրհուս կենտրոնների ծրագրի PR պատասխանատու